Հերհեր

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Նաիրի Բաբայան
Հեռախոս՝ +374 93003209

Գյուղը գտնվում է Արփա գետի աջակողմյան վտակ Հերհեր գետի միջին հոսանքի աջ կողմում, հեռավորությունը մարզկենտրոնից 32 կմ է:

Հերհերից մոտ 1 կմ հյուսիս-արլևելք գտնվում է 8-րդ դարից հիշատակվող Սբ. Սիոն մենաստանը՝ կազմված երկու եկեղեցուց և մատուռից: Հերհերում՝ Սբ. Սիոն միանավ եկեղեցին հնագույնն է (կառուցված կիսամշակ ավազաքարով) և ունի հայ ճարտարապետության համար եզակի հորինվածք: Նրան հարավից կից է Սուրբ Աստվածածին եկեղեցին (1282-1283): Միանավ փոքրիկ մատուռը կից է Սբ. Սիոն եկեղեցուն հյուսիսից: Պարսպապատ մենաստանի գերեզմանոցում կան XIII-XVII դդ. արձանագրություններով խաչքարեր: Գյուղամիջի Սուրբ Գևորգ եկեղեցին (XIX դար) երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկ է:

Գյուղից հարավ պահպանվել են կիսավեր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատուռը (1296 թ.) և Սուրբ Գևորգ (Չիքի վանք, 1297 թ.) փոքր եկեղեցին, իսկ մոտ 1 կմ հարավ-արևելյան, լեռան գագաթին՝ «Կապույտ» ոչ մեծ բերդը (XIII-XIV դարեր): Հերհերից 3 կմ հյուսիս, գյուղատեղիում պահպանվել է կիսամշակ բազալտով կառուցված եկեղեցու աբսիդը, որի մոտ, պատվանդանի վրա կանգուն են երկու քանդակազարդ խաչքարեր: Գյուղատեղիի շրջակայքում կան 1282 թ. մեծ ու շքեղ խաչքար, XIII-XV դդ. պարզունակ քանդակներով ոչ մեծ խաչքարեր, կենցաղային թեմաներով քանդակազարդ տապանաքարեր: Գյուղում կան X-XV դարերի խաչքարեր, 2 կմ հարավ՝ գյուղատեղի, իսկ 3 կմ հյուսիս՝ գյուղատեղի:

Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և պտղաբուծությամբ:

Գյուղն ունի դպրոց և բուժկետ:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Հերհեր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 115 հուշարձան: